

օղն ալ աւելի չոր . և այս դիրքիս կլիման ալ յարմար է ծառատունկի , և փայտին տեսակը բաւական աղեկ :

Իսկ արեւմուեան կողմի կլիման սովորաբար շատ տաք կ'ըլլայ , և մասնաւորապէս կէսօրուընէ վերջն որ արեւոն ձառագայթները ուղղակի կը զարնեն . և թէպէտ ստէպ ստէպ գոլորշիով յագեալ քամիները նոյն տաքութեն սաստկութիւնը կը կոտրեն , բայց միւս կողմանէ ալ այս քամիներս շատ կը գժուարացնեն ծառերու մշակութիւնը . որովհետեւ ստէպ և սաստիկ փոթորիկներու պատճառաւ արմատաքի ըլլալէ և ջախջախսելու վտանգէն խալըսած ծառերն ալ խիստ տկար և ողորմելի կ'ըլլան , ու փայտերնուն տեսակը անպիտան և սաստիկ պինդ , անոր համար շատ տեսակ արուեստից մէջ չգործածուիր , և սովորաբար վառելու կու գայ :

Հարաւային կլիման ալ շատ նմանութիւն և յարաբերութիւն ունի արեւմուեան կլիմային հետ . բայց հարաւայինը աւելի մնասակար է տնկոց համար քան զարեւմուեանը . վասն զի ստէպ փըշած հարաւային քամիները , որոնք տաք և չոր կ'ըլլան , ամառնային արեւակէզ տաքութիւնը չքարեխառնելէն զատ՝ ջերմութիւնը և ևս կը սաստկացընեն :

Այս դրեիս վրայ տնկուած ծառերը շատ ենթակայ են գարնանային մնասակար եղեամներուն . այս պատճառաւ խիստ ուշ և դանդաղ կ'ածին , և շատ ալ չեն մեծնար :

Դ . Պաշտպանութեաննէրն ալ մեծ ազդեցութիւն կ'ընեն տեղական կլիմային վրայ . և կրնան երկու դաս բաժնուիլ . բնական պաշտպանութիւններ , ինչպէս լեռներն ու անտառները , և պաշտպանութիւնք ձեռակերտք մարդոյ , ինչպէս պատերը , խիտ առ խիտ շէնքերը , և այլն : Այս երկու տեսակներն ալ հաւասարապէս կը պաշտպաննեն եղեամէ , և քամիներէն՝ որոնք մահաբեր են ծառոց :

### ՕԴԵՐԵՒԻՈՒԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Օդաքարերու վրայ Յունաց կարծիքը :

( ) դաքարերու տեսարանը , մասնաւորապէս յագոս-Պոտամոս ինկած շան թաքարը , զրգուեց Հյունատանի իմաստունքը քննելու այս խորհրդական երեսոյթներուն ծագումը : Վիչ ժամանակի մէջ չորս զանազան կարծիքները դուրս ելան , զորոնք մի առ մի կ'ուղենք հոս դնել :

Ա . Բայտ առաջին կարծեաց օդաբարերն արգասիչ էն երէրիս արգաշնչութեանց որ էը խորանան միւնուլրտին վէրին գաւառներուն մէջ : Հարկ չէ այս ծիծաղական կարծեաց անտեղութիւնը ցուցընել , որով մետէորական քարերը կը ձեւանան այն թեթև գոլորշիովն որ արել դէպի վեր կը քաշէ :

Բ . Երկրորդ կարծիքը կը համարի օդաբարերը գարեր ու աղաւածի բնէկորեր , զորոնք երէրիս էը դրշնէն ու-ժգին ժուրուիներ ու հեռուները էն ետքեն : Արիստոտէլ առաջինն եղած է այս կերպով բացատրելու մետէորական քարերուն երեսոյթը իր Օդերեսութաբանութեանը մէջ , Կարգը Ա . գլ . 4 և 9 : Խնդըն յինքեան ձշմարտանման կը թուի այս կարծիքը . բայց աղեկ մնածելով՝ դժուարին է ըմբռնելը թէ փոթորիկ մը՝ որչափ ալ բուռն ըլլայ՝ կարենայ երկրէս փրցընել շանթաքարերու չափ մեծ զանգուածներ և այնչափ հեռու տեղուանք նետէ և այնպիսի արագութեամբ՝ որ հրաշէկ դառնան անոնք :

Երբեմն եղած կ'ըլլան դիպուածներ որ զայրագին քամիներ մեծկակ քարեր փրցընելով ասդիս անդին նետեր են . հաւանականապէս մարդիկ գտնուած են որ դիտեր են այս երեսոյթը , և բնականաբար շփոթեր են զայն օդաքարերու հետ . և որովհետեւ օդաքարերը միշտ յանկարծական կ'երեւան , ու դժուարին կրնայ հանդիպիլ որ անոնց իյնալուն պարագաները կարենայ մէկը դիտել , զարմանք չէ որ հիներն զգա-

յած ըլլան մետէորական քարերուն անկմանն ու փոթորիկներու փրցուցած ժայռի բեկորներուն անկմանը տարբերութիւնը, և այս երկու երեսոյթներէն առաջ եկած մարմնոց կազմութեանն աննմանութեանը վրայ անդրադարձած ըլլան :

Գ. Ինաքսագորաս Ալազոմենացին այնպիսի սկզբնաւորութիւն մը կընծայէր օդաքարերու, որ աւելի կը մերձենայ Ճմարտութեան : Ինքը ամենայն երկնային մարմինները ապառաժներու բեկորներ կը սեպէր՝ զորոնք եթերն իր շրջը ջական շարժմանն ուժովը փրցուցէր և երկրէս, բորբոքեր ու աստղ փոխարկեր է : Ինքն այս կերպով բացատրեց տիեզերաց կազմութիւը, որպէս զի անկէ կարենայ հետեցընել մետէորական քարերու երեսոյթը : Ի բեկն էկած էը համարէր զանոնէ, անոր համար հարկ էր երկնային մարմիններն ընդունակ քարերու դնել : Ի՞ն ատեն երկիրս աշխարհի կեդրոնը կը սեպուէր, և իբրև արարչագործութեան ամենէն էական մարմինը . ասովնոյն ժամանակի մարդկանց հաւանական երեցաւ աստղերուն մեր երկրէն փրցուած քարերով կազմութիւը : Տիեզերք ժայռերու բեկորներէ կազմուած ըլլալով, զարմանք չեր որ այս բեկորներէն ումանք աստղերէն բաժնուէին ու նորէն երկրիս վրայ իյնային : Իրաւ Ինաքսագորայ մտածութիւնը հեռի է 'ի Ճմարտութենէ, սակայն ինքն առաջինը եղաւ երկրէս դուրս փնտուելու մետէորական քարերու ծագումը :

Եթէ Պլինիոսի խօսքին նայինք, Ինաքսագորաս գուշակած էր Լագոս-Պոտամոսի շանթաքարին անկումը . “ Յոյնք, կ'ըսէ յիշեալ հեղինակը, կը գովեն զի՞նաքսագորաս գուշակելուն համար թէ 78՛ ովմակիադին երկրորդ տարին քար մը պիտի իյնար արևէն, և թէ այս երեսոյթն 'ի թյրակիա պիտի հանդիպէր Լագոս գետին մօտ : — թէ որ մէկը հաւատայ այս գուշակութեան վաւերականութեանը, պէտք է խոստովանի որ Ինաքսագորաս հմայութե-

գեղեցիկ Ֆիրքն ունէր, բնութեան երեսութից պատճառները կը ճանչնար, և համոզուի որ արեւը քար մըն է կամ թէ գոնէ քարեր կան իր մակերեսութին վրայ , :

Ոչոք Ինաքսագորայ գուշակութեան վաւերականութեանը վրայ փաստեր ունի . բայց Պլուտարքոսի Լիսանդրէայ Վարուց մէջ այնպիսի հրաշալի մանրամասն հանգամանքներ կը պատմուին վերոյիշեալ երեսութին վրայ, որ գրեթէ անկարելի է հաւտալը թէ իրօք այնպիսի բաներ տեսնուեր են :

“ Իսայց Ինաքսագորայ, կ'ըսէ Պլուտարքոս, վկայէ և Իրամակոս, որ յիւրում մատենին յաղագս Բարեպաշտուէան պատմէ՝ եթէ մինչեւ վայրանկեալ վիմին այնորիկ՝ երեսէր յերկինս անդուլ զաւուրս եօթանասուն և հինգ հրեղէն մարմին ահագին՝ իբրու ամք բոցատիպ՝ ոչինչ ետեղակալ, այլ այսր անդր գնայուն յել և էջս իմն ընդհատ բուռն շարժմանց . զի և մասունք հրատիպք նիւթոյն որ 'ի ծփանաց անտի և յանկարգ դարձադարձից հերձատէր, 'ի կողմանս կողմանս յածեալք թափառէին փայլատակեալք՝ իբրև գահավիժեալ աստեղքդ : Իսկ իբրև այն մարմին 'ի վայր հոսէր, և 'ի տեղի տալ երկիւղի սքանչելեայն՝ յայն վայր դիմեցին գաւառացիքն, ոչ ինչ անդ գտանէին հուր, և ոչ հետո ինչ զմեծի բոցոյն այնորիկ, այլ տեսին անդանօր վայրանկեալ վէմ ահագին, սակայն և ոչինչ ամեննեին համեմատեալ մեծութեան հրատիպ պարունակին : Ի յլ անշուշտ Իրամակոսին աստանօր բարեմոյն և ներողամիտ ունկնդրաց պէտք իցեն , :

Ի յս նկարագրութենէն կ'երեսայ որ Լագոս-Պոտամոսի շանթաքարին անկման միջոցը լուսաւոր մետէորայ մ' ալ երեսէր է . բայց ինչպէս վերն ըսինք՝ ազատ է կարծենք ամենայն ոք Իրամակոսի նկարագրութեանն ամէն մասին չհաւտալու, մանաւանդ նոյն իսկ Պլուտարքոսի վերջին խօսքը կարդալէն վերջը :

Դ. Չորրորդ կարծիքն, որ Լագո-

Նիացի Դիոգինեսինն է, զրեթէ յամենայնի կը համաձայնի այսօրուան օրաընդունելի եղած կարծեացը : Հիմա տիեզերական մետէորայից ծագումը անտեսանելի փոշիէ մը առաջ եկած կը սեպուի, որ կը հակի շուրջ զարեգակամբ մոլորակաց պէս . իսկ Դիոգինէս Ապոլոնիացի կը կարծէր որ մետէորական ժարեն անդեսանէլ աստղեր են որ երէքիս վրայ էինան : Այս ատենուան աստղերու մեծութեանը վրայ եղած գաղափարներուն համեմատ՝ կարելի էր նմանցընել ըստ ամենայնի այս անտեսանելի աստղերն երկնային կամարին վրայ փայլող աստղերուն :

“ Ինդ մէջ տեսանելի աստեղաց, կ’ըսէր Դիոգինէս, կը շարժին նաև անտեսանելի աստղեր, որոնց հետևաբար կարելի եղած չէ անուն դնել : Ի սոնք ստէպ կ’իյնան երկրիս վրայ և կը մարին այն ժարէ աստղին պէս՝ որ ամբողջ կրակ կտրած ինկաւ Ագոս-Պոտամոսի մօտ ” :

Երբոր մարդ կը քննէ հնոց կարծիքները, ’ի մեծ զարմանս իւր այնպիսի բացատրութիւններ կը գտնայ երթեմն ’ի նոսա, զորոնք արդի գիտուններն ալ յանձն կ’առնեն գործածելու : Այրդկային մտաց զարգացման արգելք՝ հազորդակցութեան միջոցներու պակսութիւնն եղած է, գրոց բազմաթիւ օրինակներով տարածուելու դժուարութիւնը, և մանաւանդ՝ գիտութեան իրերե խորհրդական գանձ մը անմատոյց ըլլալը : Արովչետե կը տեսնանք որ հին հանձարը տեղ տեղ այնպիսի պայծառ փայլակներով չղքեր է շրջապատող մթութիւնը, որ անհաւատալի կ’երեան այն դարերուն համար : Այսպէս՝ Դիոգինէս Ապոլոնիացին, որուն աստղաբաշխական զրութեան հիմունքը լի են բազմաթիւ վրիպակներով, անդրադարձեր է թէ շանթաքարերն անտեսանելի մարմիններ էին՝ աստեղաց բնութեամբ, որ երկրիս վրայ կ’ինային : Այս կարծիքս մեծ պարծանքի մը զրաւական է իրեն : Արդի գիտութիւնն հաստատեց իր կարծիքը, զար-

գացընելով զայն և հիմնելով դիտողութեան վրայ :

## ՏՕՄԱՐԱԴԻՏՈՒԹԻՒՆ

—  
Հոկտեմբեր ամիսը :

Յուլիսին պէս Հոկտեմբեր ամսուան օրերն ալ ոչ երեկք պակսած ունին : Հումայ հիմնադիրը 31 օր տուած էր անոր, զորոնք նաև՝ Այս և Յուլիս կեսար անփոփոխ պահեցին : Աակայն եթէ օրերուն թուցն կողմանէ միշտ անայլայելի մնաց, քաղաքական տարւոյն մէջ իր կարգը չկրցաւ պահել : Ասկըբան ութերորդ ամիսն էր, ինչպէս իր լատինական անունէն կ’իմացուի . ետքը տասներորդն եղաւ, առանց Հումանըսէն առած անունը կորսնցընելու . թէ պէտ Դամետիանոս կայսրը ջանաց փոխել զայն, վասն զի Յուլիս կեսարուն ( զոստոսի նախանձելով՝ որոնց անուններն օրացուցի մէջ անցեր էին, ուղեց որ հոկտեմբերն ալ իր անուամբը Դութիւնանէան զուրցուի : Աակայն այդ փորձը չյաջողեցաւ . որովհետեւ յանձն չառին Հումայեցիք տարւոյն ամիսներէն մէկը բռնաւորի մը յիշատակին նրւիրելու :

Հումայեցիք հոկտեմբեր ամիսը Արէս աստուծոյն պաշտպանութեն յանձնած էին : Իրաւ Հումուլու իր տարւոյն առաջին ամիսը պատերազմի դից նուիրած էր . սակայն ասիկայ քիչ տեսեց, և երբոր Հումայեցիք իրենց օրացոյը պատշաճ կերպով մը կանոնաւորեցին, իւրաքանչիւր ամիս մէկմէկ դից պաշտպանութեանը տակ դրուեցաւ :

Հոկտ . 31 օր ունենալով, այսինքն տարւոյն մէծ ամսներէն մէկն ըլլալով, իր նոնայշը ամսուն 7են կու գար, իսկ էրոսէ՝ 15են : Հոկտ . մէջ հանդիպած ամենէն նշանաւոր և միանգիպամայն ըստոյգ դէպքն է Աիրզիլիոսի ծնունդը . որ ամսուս 14են հանդիպած է՝ իդուն նախընթաց օրը :